ՀՏԴ 82.09(749.25) Գրականագիտություն

ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԺԱՆՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ 1920-1930-ԱԿԱՆ ԹԹ. ԽՈՐՀՐԴԱՀԱՅ ԱՐՁԱԿՈՒՄ

Նարինե ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Առանցքային բառեր՝ *ինքնակենսագրական ժանր, ազգային գաղափարաբանություն, ժողովրդի հիշողություն, հայրենիքի կորուստ, ազգային ինքնագիտակցություն, խորհրդային աշխարհաքաղաքացիություն, ծագումնաբանություն, ցեղասպանություն:*

Key words- *biographical genre, national ideology, national memory, loss of homeland, national identity, the Soviet cosmopolitanism, genealogy, genocide.*

Ключевые слова- *биографический жанр, национальная идеология, народная память, потеря родины, национальное самосознание, советский космополитизм, генеалогия, геноцид.*

N. Hovhannisyan

The Tendencies in the Development of the Biographical Genre in Soviet-Armenian Prose of the 1920-1930s.

The paper reviewed the tendencies in the development of the biographical genre in the Soviet Armenian prose of 1920-1930s due to the specific historical and political preconditions. In the period of the literary and political tyranny looking back was literally threatened by conversion to a "Salt Statue». Under the veil of the personal story the biographical prose of Soviet Armenia of 1920-1930s touched on national issues: contrasting the lost, material homeland to the spiritual and sacred home; dying of national ideology and history to national identity, memory; the Soviet cosmopolitanism to confirming genealogy and homeland.

Н. Аванесян

Тенденции развития биографического жанра в советско-армянской прозе 1920-1930гг.

В статье пересматриваются тенденции развития биографического жанра в советской армянской прозе 1920-1930 гг. обусловленные конкретными историко-политическими предпосылками. В этот период литературно-политической тирании заглядывать назад, буквально грозило превращением в «Солевую статую». Под пеленой личного рассказа биографическая проза Советской Армении 1920-1930 гг. затрагивала общенациональные вопросы: противопоставляя утраченной, материальной родине духовную, неутраченную родину; погибающей национальной идеологии и истории - национальное самосознание и память; советскому космополитизму –подтверждение генеалогии и родины.

Հոդվածում վերաքննվում են 1920-1930-ական թթ. խորհրդահայ արձակում ինքնակենսագրական ժանրի զարգացման միտումները՝ պայմանավորված պատմաքաղաքական կոնկրետ նախադրյալներով: Հետ նայելը գրաքաղաքական տվյալ բռնաշրջանում բառացիորեն «աղե արձան» դառնալու սպառնալիք էր, լինել-չլինելու իրողություն: Անհատական ինքնապատումի շղարշի տակ 1920-1930-ական թթ. խորհրդահայ ինքնակենսագրական արձակն արծարծում էր համազգային նշանակության խնդիրներ, որոնք են՝ կորուսյալ առարկայական հայրենիքի դեմ՝ հոգևոր անկորուստ հայրենիք, կործանվող ազգային գաղափարաբանության ու պատմության դեմ՝ ազգային ինքնագիտակցություն ու հիշողություն, խորհրդային աշխարհաքաղաքացիության դեմ՝ ծննդավայրի և ծագումնաբանության վերահաստատում-վերարժևորում:

1920-1930-ական թթ. խորհրդահայ արձակում, գրաքաղաքական կոնկրետ նախադրյալներով պայմանավորված, զարգացման սրընթաց աստիճանի հասավ ինքնակենսագրական ժանրը: Ծրագրային միտվածությամբ առանձնացող ինքնակենսագրական ժանրը կարճ ժամանակաընթացքում՝ 1927-1935թթ., երևան բերեց գեղարվեստական ինքնատիպ արժեքներ, որոնց մի ծայրում Գ. Մահարու «Մանկություն», «Պատանեկություն», Վ. Թոթովենցի «Կյանքը հին հռովմեական ճանապարհի վրա», Զ. Եսայանի «Սիլիհտարի պարտեզները» վիպակներն են, մյուսում՝ Ս. Զորյանի «Մի կյանքի պատմություն»-ը: Հիմնաքար ունենալով Չարենցի ծննդավայրի ասքը՝ պատմաքաղաքական առաջնագույն հարցադրումներով, ինքնակենսագրական ժանրի հեղինակները սփյուռքահայ կարոտի գրականությանը համադիր վեր էին պարզում խորհրդահայ կարոտի և ողբերգության գրականությունը: Ինքնակենսագրության ժանրը, անշուշտ, արտաքին կեղևն էր միայն, որի ներսում

ցեղասպանության և բռնագաղթի ենթարկված ժողովրդի մնացորդների հիշողությունն էր հայրենի կորուսյալ եզերքների, հարազատ մարդկանց, հոգևոր արժեքների մասին: <<Տարիները աղոտել են շատ բան. օ՛, այո, շատ գծեր են ջնջվել, և շատ պայծառ դեմքեր մշուշվել: Ես ուզում եմ փրկել մնացածն ու հնարավորը իմ մանկության խորասուզվող ոսկե մակույկից… Ինձ մնում է փրկել մնացածն ու հնարավորը: Հիշել եմ ուզում, վերհիշել և գրել, գրել հեշտ և թեթև, գրել և զգալ, որ քունքերս խփում են ներքին հուզմունքից, գրել անմշուշ, պայծառ, պայծառ, այն քաղաքի երկնքի նման, ծովի կապույտի նման, այգեստանների կանաչի ու լուսնկա գիշերների խորության նման>>[1]:

Մահարին նախանշում է իր ստեղծագործական ուղղվածությունը, ինչը ոգեղեն կենսագոյությամբ ծննդավայրի տեսիլքի պահպանումն է՝ թե որպես առարկայական հիշողություն, թե որպես գաղափարա-գործնական ընթացք: Իսկ դա ենթադրում էր նաև ազգային պատմություն և գաղափարաբանություն՝ ազգային հիշողությամբ ու ինքնագիտակցությամբ: Որտեղից են սերում իրենք, ինչ ճանապարհ է պարտադրվել արևմտահայությանը, ինչ են թողել հետևում: Հետ նայելը գրաքաղաքական տվյալ բռնաշրջանում բառացիորեն <<աղե արձան>> դառնալու սպառնալիք էր, լինել-չլինելու իրողություն: <<Իմ մանկությունն անցել է այդ ազարակում, մարմարյա այդ ավազանի եզրին, անցել է աղավնու սպիտակ թևերի վրա: Գիշերը կապույտ երկնքից այնքա՞ն աստղեր էին թափվում նրա պայծառ, աստղասարսուռ խորության մեջ>>[2] :

Ինքնակենսագրական տեսակը փաստորեն գաղափարական դիմակայման առերես միջոց էր ազգային ինքնության համահարթման ճանապարհին: Ուշագրավ է, որ վերհուշի գրական ժամանակը գրեթե միշտ ոչ թե անցյալն է, այլ ներկան, անցյալի վերապրման հոգեբանական վիճակը ոչ այնքան ետընթաց է, որքան առաջընթաց՝ ինքնահիշողությունից դեպի ինքնահաստատում:

Պաշտոնական գրաքննությունը ժամանակին թե Մահարու, թե Թոթովենցի ինքնապատումը մերժում էր իշխող վարչակարգի քարոզչադիրքերից: Կորուսյալ երկրի, ցեղասպանության և բռնագաղթի հիշողությունը դատապարտվում էր որպես ազգայնամոլություն, ռասսիզմ, դաշնակցականություն, անցյալի իդեալականացում, հակախորհրդայնություն: <<Գրական թերթի>> նախկին պատասխանատու քարտուղար Վ. Ալազանը <<Կյանքը խորհրդային գրականությունից հեռանալու ճանապարհի վրա>> հոդվածում գրեց, որ Թոթովենցը սխալ և նացիոնալիստական ձևով պատկերեց հայ-թուրքական հարաբերությունները, կոտորածները, որ նա բռնել է սխալ և վտանգավոր ճանապարհ և որ պետք է հրաժարվի <<Հին հռովմեական այս ճանապարհից և շարունակի <<Բաքվի>> ճշմարիտ ուղին: Ժամանակի մամլիչ գրաքննության ճնշման տակ Թոթովենցը ստիպված սկսեց <<Բաքու>> եռահատոր վեպը՝ ապացուցելու դասակարգային պայքարի իր ըմբռնումն ու հավատարմությունը:

Հայաստանում խորհրդային տարիներին, առավել ևս 1920-1930-ական թթ., ինչպես նշվեց, նացիոնալիզմ, հակահեղափոխականություն, դաշնակցականություն էին որակվում բռնազավթված հայրենիքի և ցեղասպանության հիշողությունը, անցյալի և պատմության վերհուշը: Ժամանակի վայ-գրաքննիչներից մեկը՝ Գ. Վանանդեցին,<<Կյանքը այն ճանապարհի վրա, որ տանում է սովետական գրականությունից դուրս>> ջախջախիչ հոդվածում Թոթովենցին մեղադրում է իրականությունից փախչելու նացիոնալիստական մտայնության մեջ: <<Նացիոնալիստական>> մտայնությունների դեմ խորհրդային միտումնավոր, ծախու գրաքննությունը մոլեգնում էր մամուլում, գրական, հասարակական-քաղաքական ամբիոններից: Միայն 1936թ. տպագրվել են <<Գրական լեզվի նացիոնալիստական աղավաղումների դեմ>> (Խորհրդային գրականություն, 1936, թիվ 3-4), <<Ընդդեմ նացիոնալիզմի և տրոցկիզմի, հանուն սոցիալիստական մեծ գրականության>> <<Գրական սերունդ>>, 1936, թիվ 4), <<Կապը կտրած խմբապետը>> (<<Գրական սերունդ>>, 1936, թիվ 5-6), <<Նացիոնալիստը

[1] Գուրգեն Մահարի, Երիտասարդության սեմին, Ե., 1956, <<Հայպետհրատ>>, էջ 7:
[2] Վահան Թոթովենց, Երկեր, Ե., 1957, <<Հայպետհրատ>>, էջ 17:

խորհրդային գրողի դիմակով>> (<<Գրական թերթ>>, 1936, թիվ 19), <<Հակասովետական տրոցկիստ-նացիոնալիստ վիժվածքներ>> (<<Սովետական Հայաստան>>, 1936, 2 սեպտեմբերի), <<Նացիոնալիստական-տրոցկիստական տականքներ>> (<<Սովետական Հայաստան>>, 1936, 4 սեպտեմբերի), <<Ատում և զզվում ենք նացիոնալիստական-տրոցկիստական տականքներից>> (<<Սովետական Հայաստան>>, 1936, 4 սեպտեմբերի) հոդվածները: 1936թ. հուլիսի 14-ին Գրողների միության կուսկազմակերպության ժողովում <<նացիոնալիստների>> դեմ հերթական ջարդարարական ելույթն է ունենում Հ. Քոչարը, իսկ օգոստոսի 7-ի զեկուցումում մատնանշում. <<Նորենցն, իմ անկեղծ համոզմամբ, նացիոնալիստ է, և նրա նացիոնալիզմը թափանցել է նույնիսկ նրա ընտանեկան կենցաղի մեջ: Պատահական չէ, որ սասունցի Վաղարշակ Նորենցի տղայի անունը Սասունիկ է: Վ. Նորենցն ու Ա. Բակունցի <<Ծիրանի փողի>> Սասուն վերադառնալ ցանկացող հերոսը հիշեցնում են իրար>> [1]:

1936թ. դեկտեմբերի 31-ին <<Գրական թերթ>> -ում <<Դաշնակցական տականքը>> վերնագրով հրատարակվում է Ա. Ոսկերչյանի հոդվածը, ուր Թոթովենցը մեղադրվում է որպես աջ տրոցկիստական, ահաբեկչական խմբակցության անդամ, նացիոնալիստ, շովինիստ, ֆաշիստ, ազգային ատելության և թշնամանքի քարոզիչ: Գրական վիժվածք համարելով <<Կյանքը հին հռովմեական ճանապարհի վրա>> վիպակը՝ վայ-գրաքննիչը շարունակում է.<<Այդ գրվածքում իր մանկության, անցյալի նկարագրության քողի տակ նա անց է կացնում խորհրդային կարգերի հանդեպ իր ունեցած լպիրշ թշնամանքն ու ռասսայական, ֆաշիստական տեսությունը>>[2] : <<Հայերի և թուրքերի թշնամության ռասսայական տեսության մեջ>> Թոթովենցին մեղադրում է նաև Ն. Զարյանը. <<Բակունցի նացիոնալիստական-տրոցկիստական խմբակը դնում էր Հայաստանի սահմանների հարցը և ատելություն էր հրահրում դեպի թուրքերը>>[3] :

Հայ ազգային գիտակցությունը այսպես ահաբեկչության էր ենթարկվում բոլոր առումներով, գործադրվում էին բոլոր միջոցները՝ իսպառ ջնջելու ցեղասպանության և կորուսյալ հայրենիքի հիշողությունը: Թուրքիայի կողմից ցեղասպանված ժողովրդի սերուցքը վերստին սպանդի էր ենթարկվում նրա դաշնակից ԽՍՀՄ-ի կողմից, իսկ ցեղասպանության նվազագույն հիշողությունն անգամ դատապարտվում էր իբրև ռասսիզմ: Արևմտահայաստանի, ինչպես և Կարսի, Նախիջևանի, Ղարաբաղի, Ախալքալակի՝ Հայաստանին վերամիավորման գաղափարը, գաղթականության վերադարձի հույսը կորուսյալ ծննդավայր դատապարտելի էին որպես հայկական նացիոնալիզմ: Այս մեղադրանքով թիարան քշվեց Խորհրդային Հայաստանի ստեղծագործ փաղանգը՝ Բակունց, Թոթովենց, Մահարի, Չարենց և ուրիշներ: Ըստ ականատես վկայի՝ Ռ. Աթոյանի, հարցաքննության տարվող Թոթովենցը բանտախցից բանտախուց գոռում էր.<<Ֆրանսիացոց լրտես՝ ուզենաք, կլինեմ, ճապոնացոց կլինեմ, հաբեշների լրտես ուզենաք՝ կլինեմ, թուրքական լրտես չե՛մ լինի, չե՛մ լինի, չե՛մ լինի…>> [4]:

Վ. Թոթովենցի ամերիկյան տարիները, Անդրանիկի թիկնապահ և թարգմանիչ լինելը, կամավորական կռիվներին մասնակցությունը, Թիֆլիսում անգլիական օգնության կոմիտեում իբրև թարգմանիչ աշխատելը, անգամ <<Հայաստան>> թերթին աշխատակցելը բավարար հիմքեր էին՝ հերյուրելու զազրելի մեղադրականներ: 1936թ. սեպտեմբերին Հայաստանի գրողների միության ժողովի միաձայն որոշմամբ գրողների միության շարքերից հեռացվում են Թոթովենցը, Մահարին, Բակունցը, Դր. Սիմոնյանը, Վ. Ալազանը, Վ. Նորենցը, Գ. Վանանդեցին: Ապաշնորհ, ծառայամիտ քննադատությունը, որ այդ տարիներին տեր ու տիրական էր հռչակել իրեն գրական ամայացող դաշտում, ջանադրաբար արագացնում էր ստեղծագործ փաղանգի վերացումը ասպարեզից: Միջպրոլետարական այդ զազրելի մրցակցության արդյունքը 1937-ի սպանդն է՝ գլխավոր հերոսների կյանքի ու ստեղծագործության ողբերգական ընդհատումով:

---

[1] ՀՊԱ,ֆ. 1346,գ. 4, թիվ13-16, էջ104-106:

[2] <<Գրական թերթ>>,1936, N 29:

[3] <<Ընդդեմ նացիոնալիզմի և տրոցկիզմի, հանուն սոցիալիստական մեծ գրականության>>, <<Գրական սերունդ>>, 1936, թիվ 4, էջ 15-19:

[4] <<Նորք>>, 1989, N12:

Ինքնակենսագրությունն ահա գրապատմական այդ շրջանում վերաճում է ժողովրդի պատմության, հիշողությունը՝ հայրենիքի ոգեղեն և իրեղեն լինելության: Անհատական կենսագրությունը համընդհանրացնում է ժողովրդի պատմությունն ու ազգային ճանապարհը, ինքնակենսագիր գրողը դառնում ժողովրդի համահավաք կերպար, նաև ազգային հոգևոր ճանապարհի առաջնորդ: Ինքանակենսագրական ժանրը նաև խորհրդային աշխարհաքաղաքացիության դեմ պահպանում էր ազգային արմատների գիտակցությունը, ազգային ինքնության առանձնահատկությունները, տոհմիկ ծննդավայրի ժառանգորդականությունը՝ անդրադարձնելով ոչ միայն պատմաքաղաքական դեպքերը, այլև ազգային կեցության գաղափարահոգեբանական հիմնահարցերը: <<Քաղաքը, որի մասին գրեցի ես, և ուր անցավ իմ մանկությունը, հաճախ, շատ հաճախ դառնում է ուղեղիս մեջ մշուշային գծերով, ժպտում է, պարզվում, ուզում է խոսել ու խոսում է. <<Դու հիշում ես ինձ>>,- հարցնում է նա: <<Հիշում եմ>>,- պատասխանում եմ…>>[1] :

Մահարու ինքնակենսագրությունն ընթանում է ժողովրդի վերջին ճանապարհին համընթաց, ինչպես Կոմիտասի կերպարը <<Անլռելի զանգակատուն>> պոեմում, երևան հանելով պատմաքաղաքական դեպքերը, ժողովրդի գոյաբանության մաքառումները, ազգային համընդհանուր հոգեբանությունը: <<Առասպել, իրականություն, կապ, բանդագուշանք իրար կը հյուսվին այս գրքին մեջ, հատկապես անոր առաջին մասերուն, որոնք կյանքի կը կոչեն հերոսամարտերի, գաղթի, Կովկաս տեղավորումի ահավոր պատմությունը: Վավերագրային ճշգրիտ պատմության որևէ ձեռնարկ դժվար թե հաջողեր այսքան խոր տպավորությամբ տալ այս բոլորը: Մահարի, քանի մը տասնյակ էջերու մեջ արվեստի հզոր շնչով սևեռած է մեր պատմության այս շրջանը>>[2] :

Ինքնակենսագրական ձևի մեջ ցեղասպանության և բռնազավթված հայրենիքի հիշողության պահպանումը 1920-1930-ական թթ. բռնաշրջանում քաղաքագիտական մտածողության գեղարվեստական կերպ էր՝ կարոտի և ցավի բնաբուխ հոսքերով: <<Այդ անէացած աշխարհի կապույտ մոխրում այժմ էլ, զգում եմ, կաթում է այդ վարդենու արյունը, կաթում է արցունքի նման, ցողի նման, կաթում է եղևնու խեժի նման: Այդ բոլորի վրա փլվեց կապույտ երկնակամարը, փլվեց, ինչպես հին տաճարի փիրուզյա գմբեթը երկրաշարժից>>[3] : Այնուհետև՝ <<Այդ հին երկրում արևը ճչում է մրգի հատիկներով, հողը շնչում է անսպառ խոտով, առվակները կարկաչում են, բացվում են մեծ առավոտներ, և իջնում են հրաթև վերջալույսեր, բարձրանում և կապույտում լողում է մի արծաթյա թաս՝ մեջը լիքը նոր կթած կաթով, տիեզերանում է գիշերն աստղահնչուն, ծառերը սլանում են դեպի երկինք, և բոլոր ծաղիկները սարսռում են ու շշնջում: Այժմ ես կուզեի հանգչեցնել իմ հոգնած գլուխն այդ երկնքի կապույտ մարմարին և լսել այն երգը, որ հեղեղում են ծառերը, առվակներն ու աստղերը>>[4] :

Եթե Թոթովենցի ինքնակենսագրական վիպակը փակվում է հայրենի երկրին գգվելու հեռահար կարոտով, Մահարու ասքն ավարտվում է ծննդավայրի հիշողության պահպանման խորհրդանիշ կտակով: <<Մայրս կապել է ծաղկազարդ մի գոգնոց. այդ գոգնոցը ծանոթ է ինձ: Ես նրան հարցնում եմ: - Վանից պիրածն ի… միտիդ ի… Միտս է, մայրիկ, ահա ես նայում եմ այդ գոգնոցի ծաղիկներին, և բարակ մի հով շոյում է դեմքս: Ինչ է, Վարագումն եմ ես…- Լավ պահի այդ գոգնոցը, մա՛… մի՛ գործածի>> [5]: Ի տարբերություն Թոթովենցի վիպակի, ուր կորուսյալ հայրենիքի գաղափարակիրը ինքը՝ հեղինակն է, Մահարու ինքնապատումում գաղափարակիր են նաև մյուս հերոսները: Կորուսյալ էրգրի ոգեղեն գոյությունը շարունակվում է բռնագաղթված ժառանգների մեջ, չեն ընկրկել վերադարձի հույսն ու կամքը.<<Ես իմ ձեռներով Սիփանա ու Մասիս սարի վերեն բայրաղ պիտի տնկեմ, ազատության բայրաղ, նոր մեռնեմ…>>[6] : Հեռվում

[1] Գուրգեն Մահարի, Երիտասարդության սեմին, Ե., 1956, <<Հայպետհրատ>>, էջ 49:
[2] Գ. Շահինեան, Գուրգէն Մահարի վաթսունի հանգրուանին, Պեյրութ, 1964, էջ 57, <<Մշակ>>:
[3] Վահան Թոթովենց, Երկեր, Ե., 1957, <<Հայպետհրատ>>, էջ 20:
[4] Նույն տեղում, էջ 174-175:
[5] Գուրգեն Մահարի, Երիտասարդության սեմին, Ե., 1956, <<Հայպետհրատ>>, էջ 186-187:
[6] Նույն տեղում, էջ 182:

թողլքված հայրենի երկրի հիշատակներից վերակենդանանում է նաև Վանի անհետացող բարբառը.<<Ոճի գյուտով, -նկատում է Ս. Աղաբաբյանը,- Մահարին երևույթ է մեր նորագույն գրականության մեջ: Նրա ոճը, իհարկե, միայն արտահայտման յուրհատկությունները չեն՝ քնարականությունն ու հումորը, գունային կոլորիտն ու բառագործածության ճկունությունը, այլև աշխարհատեսության եղանակն ու կերպը, կյանքի գնահատման իր չափանիշները>>[1] :

Թոթովենցի և Մահարու ինքնակենսագրական պատումներին հատկանշական քնարական տարրը չկա Զ. Եսայանի վիպակում: Պատմաշրջանի ռեալիստական պատկերման խնդրին Եսայանը զուտ էպիկական լուծում է տալիս: <<Մայրս կպատմեր նաև, որ կեսգիշերը անց հույն դայակը և հայրս կրակարանին շուրջը նստած, սպասելով երեխայի ծննդյան, բուռն վիճաբանության բռնվեր էին իրարու հետ: Դայակը այն հույսը կսնուցաներ, որ երբ ռուսները գրավեն մայրաքաղաքը,<<քրիստոնյաները պիտի ազատագրվեն>>, մինչ հայրս որևէ լավ բան չէր սպասեր ռուս բանակի հաջողութենեն>>[2],- գրում է Զ. Եսայանը և ընդհանրացնում ժամանակաշրջանի քաղաքական պատկերը.<<Ժամանակները գեշ էին … որ կողմը որ դառնայիր, ազատում չկար… Մեծ մայրս կպատմեր, որ այն ժամանակ կիները առհասարակ դուրս չէին ելներ տունեն, իսկ տղամարդիկ ամեն առավոտ գործի երթալու համար, դռանը սեմին վրա կանգ կառնեին, կխաչակնքեին և տնեցիներու հետ հելլալամիշ կըլլային, որովհետև վստահ չէին, որ պիտի վերադառնային իրիկունը: Քանի-քանի անգամներ, Ստամբոլի փողոցներու մեջ, ենիչերի մը իր յաթաղանի սրությունը փորձելու համար թռցուցած էր քրիստոնյայի մը գլուխը…>>[3] :

Կոտորածների հոգեցունց պատկերների փոխարեն Թոթովենցը գրականություն է բերում ցեղասպանության հիշողությունը և ի հեճուկս խորհրդային սպառնալիքների՝ հավաստում.<<Հիշում եմ մորաքրոջս աղջկան՝ Ռեբեկային…, որի կապույտ և խոշոր աչքերը միայն բավական էին, որ կարելի լիներ վերականգնել ողջ խորտակված երկինքը: Այդ երկինքը խորտակվեց Ռեբեկայի լուսաբացի բարձր և սպիտակ շուշանների վրա: Տարան նրան արաբական անապատները… Լսեցի ահավոր մորմոքով, որ նրա արևային ճակատի և այտերի վրա խալեր են դրոշմել… Քույր, խոնարհվում եմ քո զարհուրելի ճակատագրի առաջ…>>[4] : Վերջին պատկերում Թոթովենցը հիշատակում է ցեղասպանության ահազարհուր հետևանքներից մեկը՝ մարմնավաճառության ստրկության դատապարտված արևմտահայ աղջիկների ողբերգությունը:

Այսպես, անհատական ինքնապատումի շղարշի տակ 1920-1930-ական թթ. խորհրդահայ ինքնակենսագրական արձակն արծարծում էր համազգային նշանակության խնդիրներ, որոնք են՝ կորուսյալ առարկայական հայրենիքի դեմ՝ հոգևոր անկորուստ հայրենիք, կործանվող ազգային գաղափարաբանության ու պատմության դեմ՝ ազգային ինքնագիտակցություն ու հիշողություն, խորհրդային աշխարհաքաղաքացիության դեմ՝ ծննդավայրի և ծագումնաբանության վերահաստատում- վերարժևորում:

Տեղեկություններ հեղինակի մասին.

Նարինե Հովհաննիսյան - բ.գ.թ., դոցենտ , ԱրՊՀ գրականության և լրագրության ամբիոն
Էլ. հասցե՝ nare-luys@mail.ru

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, բ.գ.դ., Ս.Խանյանը:

[1] Ս. Աղաբաբյան, Արվեստի կնիքը, <<Գրական թերթ>>, 1973, թիվ 33, 10 օգոստոսի:
[2] Զ. Եսայան, Սիլիհտարի պարտեզները, Ե., էջ 149:
[3] Նույն տեղում:
[4] Վահան Թոթովենց, Երկեր, Ե., 1957, <<Հայպետհրատ>>, էջ 65-66: